ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հրապ. Կառավարական տուն 3

"13" փետրվարի 2025թ. N 290-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 31-ի թիվ 6 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

2/13/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
«13» փետրվարի 2025թ.
N240-Ա հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

31.01.2025թ. ք. Երևան

2025թ. հունվարի 31-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
քարտուղար՝ Խ. Սողոմոնյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Կ. Մկրտչյանը

Օրակարգում՝

1. «Ֆիրմա-Առ-Շին» ՍՊ ընկերության «Թումանյան-Վանաձոր» թիվ 05-008

2. «Միլլարեն» ՍՊԸ ընկերության «Վանաձոր-Սպիտակ-Լեռնանցք» թիվ 05-005 ներմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը փոխարինելու մասին գրությունը,

3. «Տրանս Կոմֆորտ 999» ՍՊ ընկերության «Դիլիջան-Երևան» թիվ 651 միջմարզային երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու մասին գրությունը:

Քննարկվեց՝

1. «Ֆիրմա-Առ-Շին» ՍՊ ընկերության «Թումանյան-Վանաձոր» թիվ 05-008 ներմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը փոխարինելու հարցը,

2. «Միլլարեն» ՍՊԸ ընկերության «Վանաձոր-Սպիտակ-Լեռնանցք» թիվ 05-005 ներմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը փոխարինելու հարցը,

3. «Տրանս Կոմֆորտ 999» ՍՊ ընկերության «Դիլիջան-Երևան» թիվ 651 միջմարզային երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու հարցը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներով՝

1. Թույլատրել «Ֆիրմա-Առ-Շին» ՍՊ ընկերությանը Թումանյան-Վանաձոր» թիվ 05-008 ներմարզային երթուղում շահագործվող շահագործվող «Գազ 32212» մակնիշի 36 NA 478 (0709L) հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Գազ 32213» մակնիշի 37 AJ 126 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով,

2. Թույլատրել «Միլլարեն» ՍՊԸ ընկերությանը «Վանաձոր-Սպիտակ-Լեռնանցք» թիվ 05-005 ներմարզային երթուղում շահագործվող «Գազ A65R32-80» մակնիշի 36 CS 435 (1866L) հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Գազ 322121» մակնիշի 37 EN 613 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով,

3. Թույլատրել «Տրանս Կոմֆորտ 999» ՍՊ ընկերության «Դիլիջան-Երևան» թիվ 651 միջմարզային երթուղին համալրել «Գազ 322132-206» մակնիշի 37 AE 530հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով:

Մրցութային հանձնաժողովի

քարտուղար՝ Խ. Սողոմոնյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Կ. Մկրտչյան